

լսելի ըրաւ Պախի աշխարհիկ փանքաբներէն մէկ քանին . Մխափողի փանքաբէն եւ ուրիշ ոչ նը-
ւազ սիրուն քանի մը կտորներէ յետոյ , լսե-
ցինք Հայփցիկի ընտրութեանց համար փանքաբը,
ուր արդէն կարելի է նկատել Պեթովընի գորո-
վալից ժպիտը , բայց դեռ զերծ աճէն դառնու-
թեանէ . Օր . Մարգրիտ Բաբայեան այդ երգը եր-
գեց ձայնով մը աւելի փափուկ , ձկուն ու հեշտ՝
քան ինչ որ կարելի է երազել , եւ ժանաւանդ
անկեղծութեամբ մը որ կը յուզէ եւ կը հմայէ
առաջին վայրկեանէն : Որովհետեւ մարդ կը
գուշակէ , զինքն իմանալով , թէ այդ զմայ-

լելի արուեստագիտունին հանդէսին համար մի-
այն կ'երգէ , եւ այնպէս ինչպէս մենք կը խօ-
սինք , իր մտածումն ու զգացումը արտայայտե-
լու համար . Շատ գողարիկ կերպով մարմնաւո-
րեց նաեւ Լիլէնի յամառ ժպիտը եւ նազոտ որկ-
րամուրթիւնը « Սուրճի զեղծման վրայ » քան-
թաթին մէջ , ուր Պ . Բետեր ըսրձը ոճով ու
սքանչելի ձայնով Շլէնտրիան մը եղաւ , մինչ-
դեռ երիտասարդ թենոր մը , Պ . Մուզունեան ,
ծափահարել կուտար օրկան մը արտասովոր
ընդարձակութեամբ եւ շատ քաղցր հնչիւ-
նով :



Փարիզի Հայկական Միութիւն

Փարիզի « Մասիս » Հայկական Ակումբին
անդամները իրենց Մարտ 8ի ամսական հա-
ւաքման մէջ , որոյցցին հիմնել ընկերութիւն
մը՝ « Փարիզի Հայկական Միութիւն » անու-
նով , Ընտրեցին յանձնախումբ մը՝ կանոնադ-
րութիւնը խմբագրելու համար : Այդ յանձնա-
խումբը զոր կը կազմէին ՊՊ . ԲԺ . Ա . Բաբայ-
եան , Յ . Իսքենտէր , Հ . Մելիքեան , Մ . Յովա-
կիմեան , Շիրվանզադէ եւ Ա . Չօպանեան ,
պատրաստեց կանոնադրութիւնը , եւ մարտ 31ի
իրիկունը ներկայացուց « Մասիս » Ակումբի
անդամներուն , որոնք քանի մը փոփոխութիւն-
ներով ընդունեցան զան :

Հիմնադիր անդամները ընտրեցին « Տնօրէն
Խորհուրդ »ի համար հետեւեալ անձերը . ՊՊ . ԲԺ .
Ա . Բաբայեան , Յ . Իսքենտէր , Հ . Մելիքեան ,
Մ . Յովակիմեան , Ներսէս Խան Ներսէսեան ,
Շիրվանզադէ , Ա . Չօպանեան :

Տնօրէն Խորհուրդը իր Դիւանը ընտրեց սա-
պէս . Ներսէս Խան Ներսէսեան , Ատենապետ ,
Շիրվանզադէ՝ Փոխ-Ատենապետ , Համբարձում
Մելիքեան՝ Գանձապար , Ա . Չօպանեան՝ Ատե-
նադպիր :

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՓԱՐԻԶԻ

Հայկական Միութեան

Ն Պ Ա Տ Ա Կ

ՅՕԴՈՒԱՄ 1. « Փարիզի Հայկական Մի-
ութիւն » Ընկերութեան նպատակն է .

I. Նպատակ , օրինական միջոցներով ,
հայ ազգի բարոյական եւ նիւթական շահերու
պաշտպանման :

II. Զանցեցնել քաղաքակրթիք աշխարհին՝
Հայութեան անցեալ ու ներկայ կեանքը եւ
մտաւոր գործունէութիւնը :

III. Տարածել հայ ժողովրդին մէջ արեւ-
մրտեան քաղաքակրթութիւնը :

Գործունէութեան միջոցներ

ՅՕԴՈՒԱՄ 2. « Փարիզի Հայկական